

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Texnology LGP-ն ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	-	-	-	-	Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top: Ոչ պակաս քան 64/128 շերտանի պարուրային համակարգչային տոմոգրաֆ ընդհանուր և հատուկ կլինիկական հետազոտությունների համար, բժիշկի համար աշխատանքային կայանի, սրտաբանական, գլխի և անոթների և պերֆուզիոն վերլուծության, անոթաբանական և այլ հետազոտությունների ծրագրերի

առկայությամբ Գենտրի Փաստացի
շերտերի թիվը 360° պտույտի
դեպքում պետք է լինի ոչ պակաս
քան 64 բոլոր արագություններով,
իսկ ալգորիթմով ստացված շերտերի
քանակը ոչ պակաս քան 128 360
աստիճանի պտտման ամենակարճ
ժամանակը՝ ոչ ավելի քան 0,35 վ
Ապերտուրայի բացվածքը՝ ոչ
պակաս քան 70 սմ տրամագծով Z
առանցքով դետեկտորի լայնությունը
ոչ պակաս քան 38,4մմ, իսկ
դետեկտորի շարքերի քանակը ոչ
պակաս քան 64 Սրտի անատոմիայի
և ֆունկցիայի գնահատման
ամբողջական ծրագրային փաթեթ,
ներառյալ. Սրտի ԿՏ պատկերների
պատկերում, վերաձևավորում և
վերլուծություն՝ 2D և 3D
ձևաչափերով, սրտի անոթների
անատոմիայի, կորոնար
զարկերակի, ինչպես նաև
բազմափուլ սրտային
տվյալաշարերի որակական և
քանակական գնահատման համար:
Աորտայի և կորոնար
զարկերակների ճյուղերի ավտոմատ
առանձնացում՝ կորոնար
զարկերակների ծառի երրորդաչափ

վերակառուցմամբ, եռաչափ մոդելի
ցուցադրմամբ անգիոգրաֆիկ
դիտման ռեժիմով, ինչպես նաև
առանձնացված կառուցվածքների
կոնտուրների ձեռքով և
կիսաավտոմատ շտկման
հնարավորությամբ: Կորոնար
զարկերակների բոլոր ճյուղերի
միջին գծի ավտոմատ,
կիսաավտոմատ և ձեռքով որոշում՝
հետագծի ձեռքով շտկման
գործառույթով: Բոլոր
առանձնացված կորոնար
զարկերակների ավտոմատ և
կիսաավտոմատ անվանակոչում՝
ձեռքով շտկման և անվան
ընտրության հնարավորությամբ:
Ձախ փորոքի միոկարդի
առանձնացում՝ եռաչափ մոդելի
ստեղծմամբ և միոկարդի գունային
քարտեզավորմամբ՝ հիմնված
Հաունսֆիլդի միավորներով
խտության ցուցանիշների վրա,
նորմալ և նվազած խտությամբ
գոտիների տարբեր գունավորմամբ
(ստատիկ պերֆուզիա): Բազմափուլ
սկանավորման տվյալների
առկայության դեպքում՝ սրտի ձախ
խոռոչների համար սիստոլիկ և

դիաստոլիկ ծավալի, արտամղման
ֆրակցիայի և միոկարդի զանգվածի
ավտոմատ հաշվարկ: Գլխուղեղի ԿՏ-
պերֆուզիոն հետազոտությունների
վերլուծության համար
նախատեսված մասնագիտացված
ծրագրի առկայություն, որը
ներառում է հետևյալ
բաղադրիչները. Տվյալների
որակական և քանակական
գնահատում՝ կոնտրաստային նյութի
ներարկումից հետո ստացված ԿՏ
պատկերաշարերում հյուսվածքների
խտության փոփոխությունների
հիման վրա Պերֆուզիոն
ցուցանիշների քանակական
գնահատում՝ արյան հոսքի
արագություն, ծավալ,
ժամանակային պարամետրեր և
անոթային թափանցելիության
ցուցանիշներ Արդյունքների
ներկայացում՝ աղյուսակային,
գրաֆիկական տեսքով, ինչպես նաև
պերֆուզիայի ցուցանիշների
բաշխման գունային (ֆունկցիոնալ)
քարտեզներով՝ արյան հոսքի
արագություն, ծավալ,
ժամանակային բնութագրեր,
համակցված ֆունկցիոնալ

Անհրաժեշտ որակի ապահովման
ֆանտոմների առկայություն՝ CT
սկաների պատկերի որակը և
կարգաբերումը ստուգելու համար
Ֆանտոմի պահիչի առկայություն
Ռենտգենյան ճառագայթի
պաշտպանիչ ապակու
առկայություն՝ համապատասխան
չափսի պատին ամրացնելու
շրջանակով, ռենտգենյան
ճառագայթման առավելագույն
լարման պաշտպանությունից՝ ոչ
պակաս քան 150 ԿՎ, առկա չափը՝
ոչ պակաս քան 110 x 90 սմ,
տեսանելի լույսի
փոխանցելիությունը՝ ոչ պակաս
քան 90%, հաստությունը՝ ոչ պակաս
քան 8.0 մմ, օդային պղպջակների
առկայություն՝ չկա պղպջակ
Ինժեկտոր-ներարկիչի առկայություն
կոնտրաստային նյութի համար՝
երկու ոչ պակաս 100/100 մլ
սրվակներով, մատակարարվող
սարքի հետ աշխատելու
հնարավորությամբ - առկայություն,
հեռակառավարման վահանակ
Լրակազմ և պարագաներ. Ոչ
պակաս քան 24 ամիս երաշխիք
ամբողջ համակարգի, այդ թվում

ռենտգենյան խողովակի համար
Մոնտաժային կյուբերի, մալուխների
առկայությունն անհրաժեշտ
համակարգի տեղադրման համար
Անխափան սնուցման աղբյուրից
(UPS) մինչև համակարգչային
տոմոգրաֆի սարքավորում եռաֆազ
հոսանքի սնուցման մալուխի
առկայություն (մինչև 30 մետր) և
այդ մալուխի անցկացման ու
մոնտաժման համար բոլոր
պարագաների առկայություն
(ամրակներ, անջատիչ և այլն),
ինչպես նաև այդ մալուխի
անցկացման ու մոնտաժման
աշխատանքներ Տեղադրում և
մեկնարկ. Ոչ պակաս քան 4-օրյա
աշխատակազմի ուսուցում տեղում
Ոչ պակաս քան 3 ամիսը մեկ անգամ
մասնագետի կողմից համայն
սարքավորման ընդհանուր
գործունեության ստուգման համար
Սարքավորման խափանման
դեպքում վերանորոգում ոչ ավելի
քան 10 օրվա ընթացքում:
Ռենտգենյան խողովակի կամ
դետեկտորի խափանման դեպքում
վերանորոգում ոչ ավելի քան 30
օրվա ընթացքում Օգտագործողի

ձեռնարկները, տեխնիկական և սպասարկման ձեռնարկները, թղթային և էլեկտրոնային պատճենները, պետք է տրամադրվեն հայերեն կամ անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

Սարքավորումը պետք է լինի նոր, չօգտագործված Ապրանքը պետք է արտադրված լինի պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան նախորդող առավելագույնը 12 ամսվա ընթացքում Հրահանգներ մրցույթի մասնակիցներին. Մրցույթի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած ընկերությունը պետք է ներկայացնի սարքի տեխնիկական անձնագիրը, որը հաստատում է տեխնիկական բնութագրերը:

Մրցույթի արդյունքում պատվիրատուի հետ մատակարարման համաձայնագիր ստորագրած ընկերությունը պարտավոր է մշտապես տեղեկատվություն տրամադրել մատակարարման ընթացքի վերաբերյալ Մրցույթի արդյունքում պատվիրատուի հետ մատակարարման համաձայնագիր ստորագրած ընկերությունը

				<p>պարտավոր է սարքերի ՀՀ ներմուծման օրը տեղեկացնել պատվիրատուին Մրցույթի արդյունքում պատվիրատուի հետ մատակարարման համաձայնագիր ստորագրած ընկերությունը պարտավոր է սարքերի արկղերը բացել բացառապես պատվիրատուի ներկայացուցիչների ներկայությամբ</p> <p>Որակի վկայականներ (առկայություն) 1. ISO13485 2. ISO 9001 3. ISO 14001 4. ISO 14971 5. IIB կամ III ռիսկայնության դասի բժշկական սարքավորումների համար՝ 93/42/EEC դիրեկտիվայով պահանջվող բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած CE սերտիֆիկատ կամ համարժեք MDR Regulation (EU) 2017/745 սերտիֆիկատ կամ բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած FDA սերտիֆիկատ</p>
--	--	--	--	--